

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Հուշակերտի համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

1. ՀՀ Արմավիրի մարզի Հուշակերտ համայնքի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետի /ծածկագիր 3.3-3/:

2-րդ կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատակազմի աշխատանքային ծրագրի մշակման աշխատանքներին, իրականացնում է ծառայողական բնույթի նյութերի սահմանված կարգով համակարգային կազման աշխատանքներին, ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքը, ապահովում է գույքահարկի տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները, պատասխանատվություն է կրում համակարգչային տպագրությամբ համայնքապետարանից ելքագրվող ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության ապահովման համար:

Իրականացնում է իր պաշտոնի անձնագրով նախատեսված այլ գործառույթներ :

Ունի օրենքով , իրավական այլ ակտերով նախատեսված իրավունքներ և պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է միջնակարգ կրթություն:

Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր

լիազորությունների հետ կապված իրավական ակտերի`

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության

աշխատանքային օրենսգրքի, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական

ինքնակառավարման մասին>>, <<Հողի հարկի մասին>> , <<Գույքահարկի մասին>>

Հայաստանի Հանրապետության օրենքների, Աշխատակազմի կանոնադրության և իր

լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու

ունակություն:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2019

թվականի հոկտեմբերի 17-ին ժամը 16:00-ին, Հուշակերտի համայնքապետարանի

շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները Հուշակերտի համայնքապետարան աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզապետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթեր.

- Դիմում` մրցութային հանձնաժողովի անունով /ծևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս/:

- Տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարվումը հավաստող փաստաթղթերի պատճենների բնօրինակների հետ միյասին:

- Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2019 թ.-ի փետրվարի 15 -ի N 98-Ա որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:

- Արական սեռի անձինք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային, տեղամասային կցագրման վկայականի պաճեններ:

- Մեկ լուսանկար 3x4 չափսի:

- Անձնագրի պատճեն:

Մրցույթի մասնակցել ցանկացող ՀՀ քաղակացիները լրացուցիչ տեղեկություններ

ստանալու ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարի ծանոթանալու համար կարող են դիմել Արմավիրի մարզի Հուշակերտի համայնքապետարան 4 փ. 20 շենք

հեռ. 094-15-96-00 և Հ Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն /հասցեն՝ ք, Արմավիր, Աբովյան 71, հեռ./0237/2-07-70, /0237/2-76-49/:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր 09:00-18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է մինչև 2019թ. հոկտեմբերի 01-ը ժամը 18:00-ն :

Հասցեն՝ Արմավիրի մարզ հ. Հուշակերտ 4-րդ փ 20 շենք: